# Ինչպե՞ս ստեղծել խանութ

Կայքում խանութ ստեղծելու համար անհրաժեշտ է ձեռք բերել վճարովի փաթեթներից որևէ մեկը՝ ամական կամ տարեկան:

Փաթեթի գնումից հետո կայքում անձնական տվյալներում Ստեղծել խանութ բաժինը ակտիվ կլինի:

Որոշակի տեղեկություն, որը լրացվել է գրանցման ժամանակ ավտոմատ տեղափոխվում է տվյալ բաժին՝ խանութի անվանում, հեռախոսահամար, երկիր, հասցե:

Հիմնական քայլերն են՝

- Լրացնել խանութի անվանումը: Իրավաբանական տվյալները լրացնելուց, եթե լրացրել եք ավտոմատ տեղափոխվում է: Անվանումը ենթակա է փոփոխման
- Հեռախոսահամար, երկիր, գործունեության հասցե - այս կետերը նույնպես լրացվում են իրավաբանական տվյալներում այդ պատճառով դրանք նույնպես ավտոմատ տեղափոխվում են: Ենթակա են փոփոխման:

***Նշում՝*** գործունեության հասցեն կարող եք ընտրել մեր տեղեկատուից, եթե հասցեն բացակայում է մեր ցանկում կարող եք լրացնել այն և ընտրել առաջարկվող տարբերակներից հաջորդ դաշտում: Ինչպես նաև կարգավորել քարտեզի վրա:




- Տեղադրել գլխավոր նկար-բանները և լոգոն: Երկուսն էլ պարտադիր չեն, սակայն լոգոն չտեղադրելու դեպքում կայքում երևալու է լռելյայն լոգոտիպ




- Ըստ ցանկության լրացնել խանութի աշխատանքային օրերը և ժամերը
- Տեղադրել սոց. ցանցերի հղումները: Ամեն սոց.ցանցի հղման դաշտում տեղադրելով ձեր հղումը այն կերևա կայքում խանութի ներսի էջում: Այս դաշտերը պարտադիր չեն լրացնելու համար:
- Կարող եք լրացնել նաև Viber-ի և Whatsapp-ի կոնտակտային ինֆորմացիան



- Ինչպես նաև կարող եք լրացնել հավելյալ մինչև 4 հեռախոսահամար: Այն համարները, որոնք կցանկանաք ցուցադրվեն կայքում, դրա դիմաց գտնվող կոճակը պետք է ակտիվ դարձնել՝




Շարունակելով ստեղծել խանութը կարող եք՝

- Լրացնել նկարագրությունը
- Տեղադրել վիդեո
- Նկարներ, որոնք կերևան Մեր մասին էջի պատկերասրահի հատվածում
- Վերբեռնել անհրաժեշտ փաստաթղթեր
- և ցուցադրել



Ցուցադրումից հետո խանութը կհայտնվի կայքի Խանութներ բաժնում: Իսկ ավելացրած ինֆորմացիան համապատասխան բաժիններում:
Խանութի ստեղծումից հետո ավելացված ապրանքները ցուցադրվում են ապրանքների բաժնում:

**Խանութի տեսքի օրինակ**




Մեր մասին էջ՝



Կոնտակտներ՝


Ապրանքներ (6)
Աշխատանք
Մեր մասին
Կոնտակտներ
Աշխատանքային ժամեր
09:00-18:00
Հեռ.
+374(99)00-00-00
+374(99)00-00-00
+374(98)00-00-00
Հասցե
Հայաստան, Երևան, Հովսեփ Էմինի փողոց, 105
Directions
User Agreement